K.YU. BAGHDASARYAN

THE ISSUE OF STRATEGIC MANAGEMENT OF THE RA ECONOMY

The factors, supportieg and hindering the strategic plans of the RA economy, and their results can later be useful to various public administration bodies to make effective decisions related to strategic planning.

The article consideres an expert evaluation method, as a result of which the priorities contributing to the development of the economy are identified, proposing to implement the strategic planning concept.

Keywords: strategic management, law of decision-making power, expert method, SWOT analysis, regional integration.

ՀՏԴ 330.55:31(479.25)

Գ.Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ռ.Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՀՀ ՀՆԱ-Ի ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԽԱՌՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՔ

Ուսումնասիրվել է ՀՀ ՀՆԱ-ի և տնտեսության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, մանրածախ առևտրի և ծա-ռայությունների միջոցով արտադրված արտադրանքների/ծառայությունների ծավալների շարժընթացը՝ որպես համախառն տարածաշրջանային արդյունքի հաշվարկման հիմք, փաստացի վիճակագրական տեղեկատվության հիման վրա հաշվարկվել են նաև բոլոր նշված ցուցանիշները համադրելի գներով:

Առանցքային բառեր. ՀՆԱ, տնտեսության հիմնական ճյուղեր, սպառողական գների ինդեքս, շարժընթաց:

Ներածություն: Հայտնի է, որ աշխարհի բոլոր երկրներում որպես կարևորագույն առանցքային ցուցանիշ հաշվարկվում է ՀՆԱ-ն, ինչը բնութագրում է տվյալ երկրի բնակչության բարեկեցության մակարդակը: Հատկապես շատ կարևոր է ՀՆԱ-ի հաշվարկը բնակչության մեկ շնչի հաշվով: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ ՀՆԱ-ի և տնտեսության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, մանրածախ առևտրի և ծառայությունների միջոցով արտադրված արտադրանքների/ծառայությունների ծավալների շարժընթացը՝ որպես համախառն տարածաշրուանային արդյունքի հաշվարկման հիմք: Ելնելով նպատակից՝ դրվել են հետևյալ խնդիրները. Հավաքագրել փաստացի վիճակագրական տվյալներ ՀՀ ՀՆԱ-ի և սպառողական գների շարժընթացի վերաբերյալ 2012-2023 թթ. ընկած ժամանակահատվածում,

վերոնշալի հիման վրա՝ հաշվարկել ՀՀ ՀՆԱ-ի ծավալները նշված ժամանակաընթացքում համադրելի գներով, հավաքագրել փաստացի վիճակագրական տվյալներ ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերի շարժընթացի վերաբերյալ ուսումնասիրվող ժամանանաընթացքում, հաշվարկել բոլոր նշված ճյուղերի արտադրանքների/ծառայությունների ցուցանիշները համադրելի գներով: Վերլուծությունը կատարվել է սոցիալ-տնտեսական երևույթների վիճակագրական ժամանակագրական շարքերի վերլուծության մեթոդներով:

Սկսած 2015 թվականից՝ Հայաստանի Հանրապետությունում համախառն ներքին արդյունքի՝ ՀՆԱ-ի ցուցանիշը ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հաշվարկվում է՝ համաձայն «Ազգային հաշիվների համակարգ 2008» (այսուհետ՝ ԱՀՀ-2008) միջազգային ստանդարտի: Ըստ ԱՀՀ- 2008-ի՝ վերանայվել են Հայաստանի ազգային հաշիվերի ցուցանիշները՝ սկսած 2012 թվականից: Ազգային հաշիվների համակարգը տնտեսությունում մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է: ԱՀՀ-ի առանցքային ցուցանիշը համախառն ներքին արդյունքն է, որը բնութագրում է որոշակի ժամանակահատվածում տվյալ երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների ու ծառայությունների (հանած միջանկյալ սպառումը) արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար [1]:

Ուսումնասիրվել է ՀՀ ՀՆԱ-ի և դրա արտադրության առաջատար հինգ ճյուղերի շարժընթացը վերջին 12 տարիների ընթացքում: ՀՆԱ-ի արտադրությունը և օգտագործումը ՀՀ Վիճակագրական կոմիտեն հրապարակում է ընթացիկ շուկայական գներով: Ընթացիկ գներով արտահայտված ՀՆԱ-ի վրա սղաճի ազդեցությունը չեզոքացնելու համար հարկավոր է այն արտահայտել համադրելի՝ համեմատելի գներով: Ընդ որում, այն կատարվում է ինչպես ըստ արտադրված ՀՆԱ-ի, այնպես էլ ըստ դրա օգտագործման ցուցանիշների: ՀՆԱ-ի արտադրության ցուցանիշների վերագնահատումը համադրելի գներով իրականացվում է կրկնակի դեֆլյատավորման եղանակով, երբ ավելացված արժեքի մեծությունը ստացվում է որպես համադրելի գներով գնահատված համախառն թողարկման և միջանկյալ սպառման մեծությունների տարբերություն: Համախառն թողարկման և միջանկյալ սպառման վերագնահատումը համադրելի գներով կատարվում է երկու եղանակով.

–հաշվետու ժամանակաշրջանի տվյալները դեֆլյատորելով, ընթացիկ գներով, համապատասխան գների ինդեքսներով,

–բազիսային տարվա տվյալները՝ ընթացիկ գներով, իրական ծավալի ինդեքսներով կամ բնեղեն ինդիկատորներով էքստրապոլյացիայի ենթարկելով:

ՀՆԱ-ի օգտագործման բաղադրիչները համադրելի գներով վերագնահատելու համար կիրառվում են համապատասխան գների ինդեքսները (սպառողական գների ինդեքսը, կապիտալ ներդրումների գների ինդեքսը և այլն) և բնեղեն ցուցանիշները [2]:

Հետազոտության արդյունքները:

Աղ. 1-ում ներկայացվել են տվյալներ ՀՀ ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի շարժընթացի վերաբերյալ 2012-2023 թթ. ընկած ժամանակաընթացքում:

Աղյուսակ 1

*ՀՀ ՀՆԱ-ի և սպառողական գների ինդեքսի շարժընթացը 2012-2023թթ. **

2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
ՀՀ ՀՆԱ-ն ընթացիկ գներով, մլրդ դրամ											
4266,5	4555,6	4828,6	5032,1	5067,3	5564,5	6017,0	6543,3	6181,7	6982,8	8501,4	9502,8
ՀՀ սպառողական գների ինդեքսը											
1,026	1,058	1,030	1,037	0,986	1,010	1,025	1,014	1,012	1,072	1,086	1,020
ՀՀ ՀՆԱ-ն համադրելի գներով, մլրդ դրամ											
4158,4	4305,9	4688,0	4852,6	5139,2	5509,4	5870,2	6453,0	6108,4	6513,8	7828,2	9316,5

*Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից ՀՀ ՎԿ-ի պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա:

Աղ.1-ի տվյալների հիման վրա մեր կողմից հաշվարկվել են ժամանակագրական շարքի հիմնական վերլուծական ցուցանիշները բազիսային և շղթայական եղանակներով, որոնք ներկայացված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ ՀՆԱ-ի շարժընթացի հիմնական վերլուծական ցուցանիշները 2012–2023թթ.

Տարեթիվ	ՀՆԱ, համադրելի գներով, մլրդ դրամ	Բացարձակ հավելաճ, մլրդ դրամ		Աճի տեմպ,%		Հավելաճի տեմպ,%		1% հավելաճի բացարձակ նշանակությունը, մլրդ դրամ
		Բազիսային եղանակ	Շղթայական եղանակ	Բազիսային եղանակ	Շղթայական եղանակ	Բազիսային եղանակ	Շղթայական եղանակ	
1	2	3	4	5	6	7	8	9
2012	4158,4	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	4305,9	147,5	147,5	103,5	103,5	3,5	3,5	41,584
2014	4688,0	529,6	382,1	112,7	108,9	12,7	8,9	43,059
2015	4852,6	694,2	164,6	116,7	103,5	16,7	3,5	46,880

Աղյուսակ 2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9
2016	5139,2	980,9	286,7	123,6	105,9	23,6	5,9	48,526
2017	5509,4	1351,0	370,2	132,5	107,2	32,5	7,2	51,392
2018	5870,2	1711,9	360,8	141,2	106,5	41,2	6,5	55,094
2019	6453,0	2294,6	582,7	155,2	109,9	55,2	9,9	58,702
2020	6108,4	1950,0	-344,6	146,9	94,7	46,9	-5,3	64,530
2021	6513,8	2355,4	405,4	156,6	106,6	56,6	6,6	61,084
2022	7828,2	3669,8	1314,4	188,3	120,2	88,3	20,2	65,138
2023	9316,5	5158,1	1488,3	224,0	119,0	124,0	19,0	78,282

Աղ. 2-ի տվյալներից ակներև է, որ ողջ ուսումնասիրվող ժամանակաընթացքում ՀՀ ՀՆԱ-ն աճել է 124,0 %-ով, կամ միջին տարեկան՝ 100,337%-ով:

Որպես համախառն տարածաշրջանային արդյունքի հաշվարկման հիմք ուշագրավ է նաև ՀՀ ՀՆԱ-ի տնտեսության հիմնական ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, մանրածախ առևտուր և ծառայություններ) արտադրված արտադրանքների/ծառայությունների ծավալի շարժընթացի ուսումնասիրությունը միևնույն ժամանակաշրջանում: Այն ներկայացված է աղ. 3-ում:

Աղյուսակ 3

*ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերում արտադրված արտադրանքների/ծառայությունների և գների ինդեքսների շարժընթացը 2012-2023թթ.**

2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	Միջինում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Արդյունաբերության արտադրանքի ծավալը ընթացիկ գներով, մլրդ դրամ												
1121,9	1242,1	1291,3	1342,7	1573,4	1834,8	1937,5	2091,5	2101,1	2385,9	2683,6	2783,2	1865,8
Արդյունաբերական արտադրանք արտադրողների գների ինդեքսը												
1,070	1,047	1,085	0,992	1,015	1,039	1,016	1,005	1,024	1,099	1,026	1,015	1,036
Արդյունաբերության արտադրանքի ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ												
1048,5	1186,3	1190,1	1353,5	1550,1	1765,9	1907,0	2081,1	2051,9	2171,0	2615,6	2742,1	1805,3
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլրդ դրամ												
841,5	919,1	993,5	1001,2	878,5	908,6	892,9	853,3	833,3	933,0	1021,4	948,0	918,7
Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների ինդեքսը												
0,950	0,990	1,008	0,805	0,978	1,008	1,131	0,944	0,955	1,089	1,134	0,937	0,994
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ												
885,8	928,4	985,6	1243,7	898,3	901,4	789,5	903,9	872,6	856,7	900,7	1011,7	931,5
Շինարարության ծավալը ընթացիկ գներով, մլրդ դրամ												
479,4	453,4	463,9	481,5	410,6	429,9	435,8	450,8	432,6	470,1	541,1	619,7	472,4

Աղյուսակ 3-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Գների ինդեքսը շինարարությունում												
0,980	1,025	1,014	1,053	0,982	1,002	0,978	0,979	1,087	1,134	1,060	1,008	1,025
Շինարարության ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ												
489,2	442,3	457,5	457,3	418,1	429,0	445,6	460,5	398,0	414,6	510,5	614,8	461,4
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը ընթացիկ գներով, մլրդ դրամ												
727,8	792,3	852	880,2	1243,6	1335,7	1411,8	1549,9	1325,3	1452,6	1639,4	1811,4	1251,8
Սպառման ապրանքների գների ինդեքսը												
1,028	1,055	1,021	1,041	0,972	1,021	1,032	1,019	1,011	1,102	1,105	1,008	1,035
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ												
708,0	751,0	834,5	845,5	1279,4	1308,2	1368,0	1521,0	1310,9	1318,1	1483,6	1797,0	1210,4
Ծառայությունների ծավալը ընթացիկ գներով, մլրդ դրամ												
941,3	988,2	1090,5	1144,6	1247,2	1434,3	1725,8	1993,4	1721,7	1879,3	2575,8	3025,9	1647,3
Ծառայությունների գների ինդեքսը												
1,021	1,064	1,051	1,030	0,993	0,995	1,008	1,011	1,016	1,019	1,052	1,045	1,025
Ծառայությունների ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ												
921,9	928,8	1037,6	1111,3	1256,0	1441,5	1712,1	1971,7	1694,6	1844,3	2448,5	2895,6	1605,3

*Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից ՀՀ ՎԿ-ի պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա:

Աղ.3-ի տվյալները, արտահայտված համադրելի գներով, ներկայացված են աղ.4-ում:

Աղյուսակ 4

ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերի արտադրանքների/ծառայությունների ծավալի շարժընթացի վերլուծությունը 2012-2023 թթ.

Տարե-թիվ	ՀՆԱ, մլրդ դրամ	Բացարձակ հավելաճ, մլրդ դրամ		Աճի տեմպ, %		Հավելաճի տեմպ, %		1% հավելաճի բացարձակ նշանակությունը, մլրդ դրամ
		Բազ.եղ.	Շղթ.եղ.	Բազ.եղ.	Շղթ.եղ.	Բազ.եղ.	Շղթ.եղ.	
1	2	3	4	5	6	7	8	9
Արդյունաբերության արտադրանքի ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2012	1048,5	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	1186,3	137,8	137,8	113,1	113,1	13,1	13,1	10,485
2014	1190,1	141,6	3,8	113,5	100,3	13,5	0,3	11,863
2015	1353,5	305,0	163,4	129,1	113,7	29,1	13,7	11,901
2016	1550,1	501,6	196,6	147,8	114,5	47,8	14,5	13,535
2017	1765,9	717,4	215,8	168,4	113,9	68,4	13,9	15,501
2018	1907,0	858,5	141,1	181,9	108,0	81,9	8,0	17,659
2019	2081,1	1032,6	174,1	198,5	109,1	98,5	9,1	19,070
2020	2051,9	1003,4	-29,2	195,7	98,6	95,7	-1,4	20,811
2021	2171,0	1122,5	119,1	207,1	105,8	107,1	5,8	20,519
2022	2615,6	1567,1	444,6	249,5	120,5	149,5	20,5	21,710
2023	2742,1	1693,6	126,5	261,5	104,8	161,5	4,8	26,156

Աղյուսակ 4-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2012	885,8	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	928,4	42,6	42,6	104,8	104,8	4,8	4,8	8,858
2014	985,6	99,8	57,2	111,3	106,2	11,3	6,2	9,284
2015	1243,7	357,9	258,1	140,4	126,2	40,4	26,2	9,856
2016	898,3	12,5	-345,5	101,4	72,2	1,4	-27,8	12,437
2017	901,4	15,6	3,1	101,8	100,3	1,8	0,3	8,983
2018	789,5	-96,3	-111,9	89,1	87,6	-10,9	-12,4	9,014
2019	903,9	18,1	114,4	102,0	114,5	2,0	14,5	7,895
2020	872,6	-13,2	-31,4	98,5	96,5	-1,5	-3,5	9,039
2021	856,7	-29,0	-15,8	96,7	98,2	-3,3	-1,8	8,726
2022	900,7	14,9	44,0	101,7	105,1	1,7	5,1	8,567
2023	1011,7	126,0	111,0	114,2	112,3	14,2	12,3	9,007
Շինարարության ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2012	489,2	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	442,3	-46,8	-46,8	90,4	90,4	-9,6	-9,6	4,892
2014	457,5	-31,7	15,2	93,5	103,4	-6,5	3,4	4,423
2015	457,3	-31,9	-0,2	93,5	99,9	-6,5	-0,1	4,575
2016	418,1	-71,1	-39,1	85,5	91,4	-14,5	-8,6	4,573
2017	429,0	-60,1	10,9	87,7	102,6	-12,3	2,6	4,181
2018	445,6	-43,6	16,6	91,1	103,9	-8,9	3,9	4,290
2019	460,5	-28,7	14,9	94,1	103,3	-5,9	3,3	4,456
Շինարարության ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2020	398,0	-91,2	-62,5	81,4	86,4	-18,6	-13,6	4,605
2021	414,6	-74,6	16,6	84,7	104,2	-15,3	4,2	3,980
2022	510,5	21,3	95,9	104,4	123,1	4,4	23,1	4,146
2023	614,8	125,6	104,3	125,7	120,4	25,7	20,4	5,105
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2012	708,0	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	751,0	43,0	43,0	106,1	106,1	6,1	6,1	7,080
2014	834,5	126,5	83,5	117,9	111,1	17,9	11,1	7,510
2015	845,5	137,6	11,1	119,4	101,3	19,4	1,3	8,345
2016	1279,4	571,4	433,9	180,7	151,3	80,7	51,3	8,455
2017	1308,2	600,3	28,8	184,8	102,3	84,8	2,3	12,794
2018	1368,0	660,0	59,8	193,2	104,6	93,2	4,6	13,082
2019	1521,0	813,0	153,0	214,8	111,2	114,8	11,2	13,680
2020	1310,9	602,9	-210,1	185,2	86,2	85,2	-13,8	15,210
2021	1318,1	610,2	7,3	186,2	100,6	86,2	0,6	13,109
2022	1483,6	775,6	165,5	209,6	112,6	109,6	12,6	13,181
2023	1797,0	1089,0	313,4	253,8	121,1	153,8	21,1	14,836

Աղյուսակ 4-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2012	708,0	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	751,0	43,0	43,0	106,1	106,1	6,1	6,1	7,080
2014	834,5	126,5	83,5	117,9	111,1	17,9	11,1	7,510
2015	845,5	137,6	11,1	119,4	101,3	19,4	1,3	8,345
2016	1279,4	571,4	433,9	180,7	151,3	80,7	51,3	8,455
2017	1308,2	600,3	28,8	184,8	102,3	84,8	2,3	12,794
2018	1368,0	660,0	59,8	193,2	104,6	93,2	4,6	13,082
2019	1521,0	813,0	153,0	214,8	111,2	114,8	11,2	13,680
2020	1310,9	602,9	-210,1	185,2	86,2	85,2	-13,8	15,210
2021	1318,1	610,2	7,3	186,2	100,6	86,2	0,6	13,109
2022	1483,6	775,6	165,5	209,6	112,6	109,6	12,6	13,181
2023	1797,0	1089,0	313,4	253,8	121,1	153,8	21,1	14,836
Ծառայությունների ծավալը համադրելի գներով, մլրդ դրամ								
2012	921,9	0,0	-	100,0	-	0,0	-	-
2013	928,8	6,8	6,8	100,7	100,7	0,7	0,7	9,219
2014	1037,6	115,6	108,8	112,5	111,7	12,5	11,7	9,288
2015	1111,3	189,3	73,7	120,5	107,1	20,5	7,1	10,376
2016	1256,0	334,1	144,7	136,2	113,0	36,2	13,0	11,113
2017	1441,5	519,6	185,5	156,4	114,8	56,4	14,8	12,560
2018	1712,1	790,2	270,6	185,7	118,8	85,7	18,8	14,415
2019	1971,7	1049,8	259,6	213,9	115,2	113,9	15,2	17,121
2020	1694,6	772,6	-277,1	183,8	85,9	83,8	-14,1	19,717
2021	1844,3	922,3	149,7	200,0	108,8	100,0	8,8	16,946
2022	2448,5	1526,5	604,2	265,6	132,8	165,6	32,8	18,443
2023	2895,6	1973,7	447,1	314,1	118,3	214,1	18,3	24,485

Եզրակացություն: Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել

- ուսումնասիրվող ամբողջ ժամանակաընթացքում ՀՀ ՀՆԱ-ն աճել է 124,0 %-ով, կամ միջին տարեկան՝ 100,337%-ով;

- 2012 – 2023թթ. ընկած ժամանակաընթացքում արդյունաբերության արտադրանքի ծավալը աճել է 161,5 %-ով, գյուղատնտեսության արտադրանքի ծավալը՝ 14,2 %-ով, շինարարության ծավալը՝ 25,7 %-ով, մանրածախ առևտրի շրջանառության ծավալը՝ 153,8 %-ով և ծառայությունների ծավալը՝ 214,1 %-ով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://armstat.am/file/article/sv_12_17a_6300.pdf
2. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2023թ.», https://armstat.am/file/doc/99541093.pdf

Г.В. ВАРДАНЯН, Р.А. АГАРОНЯН

СТАТИСТИЧЕСКОЕ ИЗУЧЕНИЕ ДИНАМИКИ ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК ОСНОВА РАСЧЕТА ВАЛОВОГО РЕГИОНАЛЬНОГО ПРОДУКТА

Изучена динамика валового внутреннего продукта (ВВП) РА и объема продукции/услуг, произведенных основными отраслями экономики: промышленностью, сельским хозяйством, строительством, розничной торговлей и услугами, за период 2012-2023 гг. в качестве основы для расчета валового регионального продукта. На основе фактической статистической информации все указанные показатели рассчитывались в сопоставимых ценах.

***Ключевые слова*:** ВВП, основные отрасли экономики, индекс потребительских цен, динамика.

G.V. VARDANYAN, R.A. AHARONYAN

THE STATISTICAL STUDY OF THE DYNAMICS OF THE RA GDPAS A BASIS FOR CALCULATING THE GROSS REGIONAL PRODUCT

In the article, the trends of the RA GDP and the volume of products/services produced by the main branches of the economy: industry, agriculture, construction, retail trade and services in 2012-2023 are studied, during the period as a basis for calculating the gross spatial result based on actual statistical information, all the indicated indicators are also calculated at comparable prices.

Keywords: GDP, main branches of the economy, consumer price index, trend.